№ 236 ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 № 236

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՕՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Ամբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր առաջադեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ

„ՄՇԱԿ“

Լրագիրը արժէ 2 ռուբլի։ Մի ամսվանը 1 ռուբլի։

Կիրակի, հոկտեմբերի 29-ին

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆՑԻ

մահվան տարեդարձի առթիվ Թանդոյեան ս. Աստուածածնի եկեղեցում (Միքայէլեան փողոց) կը լինի պատարագ և հոգեհանգիստ, որի մասին հանդուցեալի ընտանիքը յայտնում է ազգականներին և ծանօթներին։ Հոգեհանգստի սկիզբը կը լինի ժամը 11-ին առաւօտեան։ 1—1

Յուլիսի 1-ից

ԲԱՑՎԱԾ Է

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

„ՊՕՂՈՍԵԱՆՆԵՐԻ“

Արմենակի-բազար տուն Զուժուլեանցի 2-րդ յարկ

Վաճառվում հնետեսակ մանուֆակտուրային ապրանքներ մեծ քանակութեամբ և թոփոլամն առ մատչելի գներով։

առ. 2. Հ. 17—20

Կիրակի, հոկտեմբերի 29-ին,

Առաւօտեան ժամը 10-ին, կը կայանայ յուլիսի 30-ին կայացած

Թիֆլիսի Առեւտրական Նաւարդիւնաբերական Ընկերութեան

բաժնետէրերի արտակարգ ընդհանուր ժողովի շարունակութիւնը, ի նկատի ունենալով քննվելիք հարցերի կարևորութիւնը, խնդրում են պ. պ. բաժնետէրերին անպատճառ հնորհ բերել։

(Ե. Հ. Հ.) առ. 3—3

Կիրակի, հոկտեմբերի 29-ին,

ցերեկվայ ժամը 12½-ին

ԿԸ ԲԱՑՎԻ

ԿՐԹԱԿԱՆ

ԶՈՒԼՀԱԿԱՆՈՅԻ ԲԱՑՈՒՄԸ,

որին կարող են ներկայ լինել բոլոր ցանկացողները։ Զուլհականոցը գտնվում է Գրիբոյեդովկայա փողոցի վրա, տիկ. Ղազիբեանի տանը № 24, վերին յարկում։

առ. 2—3

ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, հոկտեմբերի 30-ին

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը

մասնակցութեամբ տ. ՍԻՐԱՆՈՅՇԻ

կը ներկայացնէ

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

Պատմական դրամա 5 արար., իշխ. Սումբաթովի, թարգ. Տէր-Գրիգորեանի

Սկիզբը ժամը հինգ 8-ին։

Վարչութեան հերթապահ անդամ՝ Ռ. Յովհաննիսեան

Բեմադրող՝ Յ. Աբէլեան

առ. (Հ. Կ.) 1—2

Հոկտեմբերի 22-ին, Ադստաֆայից Թիֆլիս եկող № 17 գնացքից

ԿՈՐԵԼ Է

16 տարեկան

ՄԻ ՏՂԱՅ,

Ղարաղլող գիւղացի, Բախշի Ղահրամանեան Սարուխանանց ազգանունով։ Ճանաչողից խնդրվում է յայտնել նրա գտնվելու տեղը։ Ցայտնողը վարձատրութիւն կը ստանայ։

Հասցէն՝ Дворцовые номера, Асріянцу-

առ. 2—3

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի յարգոյ հասարակութեան, որ կարճ միջոցով մեռում եմ Թիֆլիս քաղաքում, «Վերսալ» հիւրանոցում, Վօլոնցօվի արձանի մօտ, համար 4—5։

ՀԻՐՕՄԱՆՏԻԿ

Տիկին Անաստասիա Իւրիեվնա ԿՕՆՍՏԱՆՏԻՆՈՎԻ

Գուշակում է ձեռքի ափի գծերով մարդուս բաղադրութիւնը և նոյնպէս գուշակում է անխաբ կերպով մարդուս անցեալը, ներկան և ապագան։ Հռչակաւոր ընդունելութիւն է գալել արտասահմանի և Ռուսաստանի զանազան մեծ քաղաքներում։

Ընդունում է ամեն օր, առաւօտեան ժամի 9-ից մինչև 1-ը և 3-ից մինչև 6-ը։

Սէանսի վճարը 1 ռ. այցելողից, իսկ ուսանողներից 50 կոպէկ։

առ. (Կ. Ա. Հ. Հ.) 4—4

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

Ընդունելութիւն ներքին և ջղային հիւանդութիւնների. առաւօտեան 9—11 ժ. երեկոյան 5—7 ժամը։

Միքայէլեան փողոց № 27, տուն Մանթաշեանի

Տելեֆօն № 1061.

առ (Ե. Հ. Հ. Կ.) 1—10

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսահակեան

ՄԱՍՆԱԳԻՏ

ներքին և վեներական հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—11 ժ. երեկոյան 5—7 ժ.

Սօլօլակ, Սերգիևսկայա 15, Փրիդոնովի տանը։

առ. (Հ. ու. Հ.) 2—100

ՇԱԲՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻԶ“

իւմօր, սատիրիկ-սիմվոլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

IV-րդ համարը,

մամուլի տակ են և շուտով լոյս կը տեսնեն V-րդ համարի հետ նաև

„ԱՆԻ“

հրատարակչ. ընկեր. գեղարուեստական բաց նամակների I սերիան

Բաժնեգին է պրէմիաներով 2 ռուբ., իսկ Անդրկովկասեան երկրի և արտասահմանի համար 2 ռուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46, 18.

«ՍԱՓՐԻԶ»-ի խմբագրութիւն

Ե. Հ. առ. 5—25

Մողնու

ծխական հոգաբարձութիւնը սրանով յայտնում է ի գիտութիւն եկեղեցու ծխականների և սեպտեմբերի 15-ին բացված ԴԱՅԻԱՆԵԱՆ դպրոցի աշակերտուհիների ծնողների, որ հոկտեմբերի 29-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին

կայանալու է

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ԴՊՐՈՅԻ

ՀԱՆԴԷՍԸ

(Բացման առթիվ)

Տեղի ազգութեան պատճառով մուտքը լինելու է տոմսակներով։ Ներկայ լինել ցանկացող ծխականները և ծնողները կարող են տոմսակներ ստանալ ուրբաթ, հոկտեմբերի 27-ին և շաբաթ՝ 28-ին, առաւօտեան ժամը 10—12, դպրոցի գրասենեակում, Պասկևիչ փողոց, տուն № 13։

(ու. Հ.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի մոռանաք. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Համախմբումներ. Կեղծիքներ Մամուլ, Բանաւորական գործադուլների և Ջարդի վնասները. Գանձակի շրջանում. Պատմական փաստեր և բացատրութիւններ. Նամակ Նոր-Բայազէտից. Վերջին խօսք. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դպրոցական բաղդը Պրուսիայում. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ԾԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԻ ՄՈՌԱՆԱՔ

I

Քաղցի սկզբնական մրմունջները արդէն լսվեցին գիւղերից։

Եւ քանի գնան նրանք կը շատանան, կը սատկանան և կը դառնան մի աղիողորմ և յուսահատական լաց ու հեծեծանք։

Պէտք է թշուառութեան առաջն առնել։

Միթէ պէտք է մեր առաջ կանգնած լինեն կմախք դարձած ուրուականներ, փոս ընկած և մաշած աչքեր, դալկացած ու թառամած դէմքեր, որպէսզի մենք զգացվենք և կարեկցենք մեր այն եղբայրակիցներին և քոյրերին, որոնք գոհ դարձան հայ-թուրքական և ուրիշ ազգներին։

Թշուառացած հազարաւոր բերանները սպասում են հացի պաշարների։

Մենք արձանագրել ենք թշուառութեան ընդարձակ ծաւալը, մենք ցոյց ենք տուել կարիքի խստութիւնն ու միութիւնը և մեր պարտն ենք համարում դարձեալ ու դարձեալ յիշեցնելու մեր հասարակութեանը իր պարտաւորութիւնների մասին դէպի իր դժբաղդ մերձաւորը։

II

Որքան ցորենը ուշ տեղ հասնէ, այնքան ծանր կը լինեն հետևանքները տեղական ազգաբնակութեան համար։

Քանի որ ցորեն չէ ներմուծված կամ ամբարված կարօտեալների համար, հացավաճառները օգտվում են դէպքից և բարձրացնում հացի գինը։ Եւ այդպիսով այն ցորենը, որ կարելի էր գնել 70—80 կոպէկով կամ մի ռուբլիով, բարձրանում է մինչև 1½ և 2 ռուբլու ամեն մի պուդը։

Շուտ օգնելով, շուտ տեղ հասցնելով ցորենի պաշարներ՝ մենք ոչ միայն հանդիսացած կը լինենք կարօտեալ ժողովրդին, այլև ոնտեսած կը լինենք նրա այն ծախքերը, որ նա պէտք է անէ հաց գնելու վրա։ Այն՝ ինչ որ նա կարող է անել մի 100 ռուբլով և փոքր ի շատ երան ապահովել, յետոյ նա անկարող կը լինի գլուխ բերել և կրկնակի գումարով։

III

Հաց մատակարարելու ամենամեծ դժուարութիւնից մէկն էլ ճանապարհների երկարութիւնն է այն շրջանների համար, որոնք հեռու են երկաթուղուց և բաժանված են միւս տեղերից լեռներով ու ձորերով։

Այդպիսի դրութեան մէջ է, օրինակ, Զանգեզուրը։

Ինչպէս ցորեն հասցնվի Սիւնիքի, Ղափանի և Գօրիսի ժողովրդին։

Պէտք է փորձել ցորենի մի մասը ուղարկել Շուշու և Նախիջևանի վրայով, իսկ միւս մասը Հին-Նախիջևանի վրայով։

Ցորենի տեղափոխութիւնը երկաթուղուց մինչև աղէտի տեղերը պահանջում է ամեն պուդի վրա 30—50 կոպէկ, երբեմն և աւելի։ Բացի մեծ ծախքից այդ փոխադրութիւնը պահանջում է որոշ հսկողութիւն և կազմակերպութիւն, որպէսզի ապրանքը տեղ հասնի և յանձնվի կարօտեալներին։

IV

Մինչև քաղցած մեր եղբայրակցի թշուառ վիճակը չապահովվի, մենք անկարող կը լինենք փոքր ի շատ հանգիստ սրտով նուիրվել մեր միւս հասարակական պարտաւորութիւններին։ Իսկ այդ պարտաւորութիւնների թիւը քիչ չէ։ Մենք այնքան գործերում զանցառու ենք եղել, մենք այնքան յետ ենք մնացել մի զարգացման ճանապարհում, որ մենք պէտք է այժմ տանապատկված ոյժերով գործէինք, որպէսզի մի կերպ վերադարձնէինք մեր կորուստները։

Եւ պէտք է սկսենք կուլտուրական մեծ աշխատանք։

Բայց թշուառացած եղբօր ձայնը մեզ միշտ պէտք է յիշեցնէ, որ նա կարօտ է օրական հացի, որ նա կարող է ենթարկվել սովի արհաւիրքներին։

Այդ կարօտ եղբօր հոգսը վերցնենք՝ ապահովելով նրան մեր օգնութեամբ։

Չէ կարելի ուշանալ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևանի նահանգի Նախիջևան գաւառից հեռագրում են, որ հոկտեմբերի 25-ին, երեկոյեան ժամի 6-ին, կոդոպված է Ղվրախի պօստատունը։ Գաւառապետը գնացել է այնտեղ։ Մանրամասնութիւնները առ այժմ անյայտ են։

—

Գանձակ, հոկտեմբերի 25-ին

Ամսիս 22-ի երեկոյեան հանրակառքը, Շամքոր կայարանից Գեորգիևսկի գարնանային աւանը գնալիս, երբ հասնում է Հաբա-երի կոչված վայրը, առաջը կարում են չորս զինված թուրքեր, թալանում ուղևոր 5 գերմանացու, երկու կնոջ, մէկ էլ անամաբոյժի։ Երէկ զէպքի վայրը գնաց գաւառապետի օգնական Լակադոշը պահակներով։

—Երկու օր է անձրև է գալիս. օրերը զգալի կերպով ցրտանում են. աղքատների, չունևորների սև օրերը մօտենում են։ Օրերկան միջին թով հայոց թաղն է մտնում թուրքաց թաղից 100 պուդ խաղող։ Հացատիկի գները զգալի կերպով բարձրանում են. հատատապէս իմացանք, որ թուրքաց թաղում հացատիկի գներն աւելի բարձր են քան հայոց մասում։

Սագան

—

Ախալցխա, հոկտեմբերի 25 ին

Երեքշաբթի, ամսիս 24-ին, վաղ առաւօտեան ժամը 5½-ին, երկու ձիաւոր անձինք, քաղաքիս գլխաւոր Ադեքսանդրեան փողոցով անցնելիս, յանկարծ կանգնում են դերձակ Արաբեանցի խանութի մօտ եղած սրճարանի առաջ և ատրճանակներով սկսում են անընդհատ կրակել դրսից, սրճատան մէջ նստած Մանուկ Արաբեանցի վրա։ Արաբեանցը ստիպված դուրս է գալիս և իրան չը կորցնելով սկսում է ինքն էլ իր ատրճանակով կրակել նրանց վրա։ Անընդհատ հրաձգութեան միջոցին դերձակ Մանուկ Արաբեանցը, ինչպէս լսեցինք, երկու ոտքերից և ձեռքից վիրաւորվում է։ Յարձակվողները անարգել հեռանում են քաղաքից։ Դեռ վաղ լինելով, փողոցներում բարեբաղդաբար շատ մարդ չէ լինում։ Վիրաւորվածի դրութիւնը, ինչպէս ասում են, քիչ ծանր է, արձիգը պատռել է միզպէս պարկի թաղանդը։ Ինչպէս ասում են, ինքը և մօտ եղողները ճանաչել են յանցաւորներին։ Իշխանութիւնը խիստ միջոցների է դիմել ձերբակալելու նրանց։ Վիրաւորվածը սի բարի և բանիւոց արհեստաւոր է, բազմանդամ ընտանիքի տէր։ Ահա թէ ինչ տեսակ դառնութեամբ ճաշակում է մեր խեղճ ու անմեղ ժողովուրդը մի քանի բարի մարդկանց ցանած սերմերը։

Ա. Դ.

—

Բերլինից մեզ հաղորդում են, որ այդ մայ աբաղաքում այժմ գումարված «Անթել հեռագրի համաժողովին» Պարսկաստանի կողմից պատուիրակ է նշանակված Յոմխանէպ խան Մասահեան, որ վարում է այժմ Բերլինի պարսից դեսպանի պաշտօնը։

—

Երեկոյեան ժամի 8-ին, Վարշավա-Վիեննա երկաթուղային ճանապարհին, Բօգով կայարանում, արտասահմանից եկող գնացքի վրա ռումբ նետվեց։ Լուրերին նայած, յափշտակված է մէկ միլիոնի ռուբլի. 15 հոգի պահապան զինուորները և պօստային պաշտօնեաների մի մասը սպանված են, մի մասը վիրաւորված։ Վագոնը ջարդ ու փշուր է եղած։

(Հեռ. Գործ.)

—

Շուշում կազմված մի յայտարարութեան մէջ, որ հրատարակել են Շուշու հայ ժողովրդի 58 ներկայացուցիչները և որի մի օրինակն ևս մեզ է ուղարկվել, մենք կարդում ենք.

«Մենք, Շուշու հայ ժողովրդի ներկայացուցիչներս, տեսնելով ժողովրդի իրաւունքների ազատութեան և սեփականութեան դէմ տեղի ունեցող մի ամբողջ շարք բռնութիւններ, սրանով յայտարարում ենք, որ մենք ամենևին կարիք չենք զգում ազգի անդամներից մի քանիսի, ինչպէս այս և այն կազմակերպութեան խնամակալութեան, որոնք ձգտելով անսահման իշխանութեան, կոպիտ ոյժի միջոցով փորձում են իսպառ խախտել ժողովրդի ազատ կամքը և անձամբ անօրինել նրա բաղդը։

«Մեզ համար անդունալի է այն վիճակը, որ մենք անկարող ենք այս լուսաւոր և ազատութեան համար կռիւ մղող դարում թողնել, որ մեզ վրա բռնութիւններ գործ դրվեն, ինչպէս և առանց մեր համաձայնութեան մի խումբ մարդիկ մեր բաղդը տնօրինեն, մեր պատուի, կեանքի և գոյքի հետ միայն իրանց ցանկութեան համաձայն վարվեն, ուստի գալիք չարիքների առաջն առնելու համար, որոշում ենք մի շարք միջոցներ»։

Այդ միջոցների թւում կայ և այն, որ ինքնապաշպանութեան գործը ժողովուրդը ամբողջապէս իր ձեռքն է առնում և որ այսուհետև ոչ մի բռնութիւն, ոչ մի կորզումն դրամների զանազան անձանց կողմից թոյլ չը պէտք է արվի։ ‖

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—Հիւսիս-Արևմտեան երկրի հողատէրերը արդէն սկսել են նախընտրողական ագիտացիա անել, բայց բացառապէս իրանց թեկնածուների համար։ Անցեալ ընտրութիւններին կալուածատէրերը բոլոր էին կազմել հրեաների տեսակ, որոնք անհրաժեշտ պայման էին դրել, որպէս զի թեկնածուները լինէին սահմանադիր-ռամկավար կուսակցութիւնից։ Մինչդեռ Դումայում, ինչպէս յայտնի է, այդ երկրի կալուածատէրերը ծայրաստեղ աջակողմեան դուրս եկան։

—«Око» լրագրին հաղորդում են, որ սոցիալ-դեմոկրատների կենտրոնական կոմիտէն Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւններին նախընտրական պայքարը աջողութեամբ առաջ տանելու համար, կազմակերպում է առանձին ընտրողական մասնաժողով ընտրութիւնների վերաբերեալ դեկավարող դիրեկտիւներ մշակելու համար և որպէս մի կենտրոնական տեսաւորութիւն, որի ցուցմունքներով ու բացատրութիւններով պէտք է դեկավարվեն տեղական ընտրողական բիւրօները և տեխնիքօ-իրաւաբանական մասնաժողովները։

—Պետերբուրգի սոց.-դեմոկրատական կազմակերպութիւնները եռանդուն պատրաստութիւններ են տեսնում ընտրողական պայքարի համար. Նեվայի ու Նարվայի մասերում արդէն ընտրողական կոմիտէները կազմված են։

—«Око» լրագիրը լսել է, որ լատիշական սոցիալ-դեմոկրատների գլուխգան կազմակերպութիւնների սեպտեմբերեան կոնֆերենցիայում, որին մասնակցել են 27 պատգամաւորներ, ընդունված է մի բանաձև, որով անհրաժեշտ է համարվում սոցիալ-դեմոկրատների գլուխգան մասնակցութիւնը նախընտրական պայքարին, իբրև անկախ պրօլետարական մի կուսակցութիւն։

—Սոցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան Հարաւային Ռուսաստանի շրջանային համագումարը նայելով Դումայի վրա իբրև երկրի իրերի զրութեան արտայայտիչ, այն կարծիքն է յայտնում, որ պէտք է ոչ միայն մասնակցել նախնական ընտրութիւններին, այլ և անմիջական մասնակցութիւն ունենալ հենց նրա մէջ սոցիալիստ-յեղափոխականների լիակատար ծրագիրը ամբողջապէս պաշտպանելու համար։

—«Փոքրամասնական» սոցիալ-դեմոկրատները նորերս լոյս տեսած «Наше Дѣло»-ի № 4-ում վճռական կերպով բացատրում են «Товарищъ»-ի կողմից իրանց վերաբերված կաղապարների հետ բլոկ կապելը Պետական Դումայի ընտրութիւններից սկզբից մինչև վերջանալը։ Իսկ «մեծամասնականները» «Вѣстн. Жизни»-ի մէջ բոլորովին պարզ կերպով ասում են միայն էս-էրների և աշխատաւորների հետ բլոկ կազմելու մասին, բայց բացատրած են վերաբերվում կադետների հետ բլոկ կազմելու մասին։

—«Сознательная Россія» լրագիրը, որ յարում է սոցիալիստ-յեղափոխականների հայեացքներին, անհրաժեշտ է համարում մասնակցել Պետական Դումայի նախընտրողական պայքարին։

—Առաջիկայ Դումայի ընտրութիւնները ի նկատի առնելով, մամուլի զատական մի քանի պաշտօնական օրգաններ հարց են յարուցել «Губернск. Вѣд.»-ները ընդարձակելու համար, որպէսզի կարելի լինի պրօգրեսսիւ լրագիրների ազդեցութեան դէմ մաքառել ընտրութիւնների ժամանակ։ Այդ նպատակով, օր. «Псковск. Губ. Вѣд.» միջնորդութիւն է յարուցել մի յատուկ բաժանմունք կազմել ընտրութիւնների համար, որտեղ «հանրամատչելի լեզուով» հնարաւոր լինէր բացատրել գիւղացիներին ընտրութիւնին վերաբերող ընթացիկ հարցերի մասին։

—Ընտրութիւնների հարցի առթիվ ռուսաց սոց.-դեմ. բանւորական կուսակցութեան կենտրոնական կոմիտէն 2 նամակ է ուղղել կուսակցութեան կազմակերպութիւններին։ Առաջին նամակում, որ գրված է հոկտեմբերի 13-ին, կենտրօնական կոմիտէը առաջարկում է կուսակցութեան կազմակերպութիւններին ընդարձակել ագիտացիան ազգաբնակութեան դեմոկրատիկ խաւերում, որպէսզի որքան կարելի է շատ օգտվեն իրանց ընտրողական իրաւունքներից։ Այդ նպատակով առաջարկվում է, նախ և առաջ, ստեղծել յատուկ կազմակերպութիւններ, որոնք յանձն առնէին թղթերը բաժանել տներին, հրաւիրելով նրանց ստորագրվել ընտրողների թուում, ուղարկել հրաւէրներ պօստով և այլն, երկրորդ, շրջաններում յատուկ իրաւաբանական խորհուրդներ կազմել ընտրութիւնների վերաբերմամբ ծագած թիւրիմացութիւնները լուծելու համար։

ՀԱՄԱԽՄԲՈՒՄՆԵՐ

I

Պետական Դումայի ընտրութիւնների մօտենալը մի կողմից և հասարակական տրամադրութեան մէջ կատարվող մի շարք փոփոխութիւնները միւս կողմից դրել են նորից հրապարակի վրա քաղաքական կուսակցութիւնների և համախմբումների խնդիրները։

Ո՞վ ինչ քաղաքական համախմբման կուսակից է և ինչպէս է ստարիր վարվել ընտրութիւնների ժամանակ—ահա մի հարց, որ դարձել է հերթական։

Անդրկովկասում ևս ընդհանրապէս, իսկ հայերի մէջ մասնաւորապէս արդէն լսվում են ձայներ, որոնք պահանջում են վերաքննելու քաղաքական համախմբումների խնդիրները և գիտակցական լոյս սփռելու այն հասարակական հոսանքների վրա, որոնք ներկայումս ազդեցիկ դեր են կատարում կեանքի մէջ։

II

Հայ կեանքի խնդիրները և մի շարք երևոյթներ ասպարէզ մղեցին տարբեր մտածողութեան և գործունէութեան ուղղութիւններ, որոնք մի կողմից բաժանում են գործողներին, իսկ միւս կողմից նրանց ժողովում տարբեր համախմբումների մէջ։

Բաժանման և համախմբման շարժառիթները շարունակում են գործել կեանքի մէջ, առաջացնում են հասարակական հոսանքներ և պահանջում են ձևակերպութիւն։

Եւ անշուշտ առաջիկայ ամիսներում մենք ականատես կը լինենք մի շարք գործողութիւնների, որոնց ձգտումը կը լինի պարզել դաւանանքների տարբերութիւնը, մարդկանց մէջ եղած դիտաւորութիւնների ընտրութիւնը և կազմել համախոհ միութիւններ։

III

Եթէ ուշադրութեան առնենք այն մասաւոր ու հասարակական հոսանքները, որոնք գոյութիւն են ունեցել մեզանում, և աւելացնենք դրանց վրա այն նոր ազդեցութիւնները, որ առաջացրել են պետութեան ընդհանուր կեանքը և ազատագրական շարժման արտայայտութիւնները, մենք կը նկատենք, որ ժամանակակից մեր սերնդի առաջ դրված են մի շարք դժուարութիւններ՝ կազմակերպելու այնպիսի համախմբումներ, որոնք կարողանային բաւարարութիւն տալ գործունների բոլոր պահանջներին։

Մեր հասարակութեան առաջ դրված է համախմբումների և քաղաքական կուսակցութիւնները կազմելու հարցը։

Եւ մենք պէտք է նրանով լուրջ զբաղվենք։

Ա. Քալանթար

ԿԵՂԾԻՔՆԵՐ

III

Եւրոպայից վերցրած ամեն մի վեհ գաղափար խեղաթիւր և կարիկատուրային դարձնել և կեղծել, կարծես, հայերիս առանձնայատկութիւնը լիներ. «ընտրողական պայքարը» դարձաւ դեմագոգիայի ճիւաղային պար, «ազգային կառավարութիւնը» մտրակի և բռունցքի միջնադարեան տիրապետութիւն, «ժողովրդական ներկայացուցչութիւնը»՝ դիսկրեցիոն (կամայական) իշխանութիւն մղձսխների և իրարդանների ձեռքում, «պարլամենտը»՝ տեղի, հանգամանքի, ժամանակի և անջրպետի հետ կապ չունեցող ծայրահեղ յիժարութիւններ արտայայտողների ժողով, և այլն և այլն։ Եւ հնագոյնս խղճուկ ազգն Ասքանազեան շարունակում է իրան և աշխարհին հաւատացնել որ նա «ամենակուլտուրական ազգն է Ասիայում» և ընտրողական իրաւունքի մասին գաղափար է կազմել Նոյ նահապետի ժամանակից արդէն կամ առնուազը Գրիգոր Լուսաւորչից սկսած։ Տեսէք մեր «ժողովրդական եկեղեցին» իր ընտրողական իրաւունքով! պարծենալով նկատում է «ծխական» հայը։ Եւ նա հաւատացած է որ այն «ժողովրդական շրջափուլը», որն ունի, դուստ դեմոկրատական մի աքանչելիք է և ոչ հակասութիւնների և տնասութիւնների մի կոնգլոմերատ։ Կաթողիկոսի աբսոլիւտիզմ և... դեմոկրատիզմ—դա հայ քաղաքագէտ փիլիսոփաների մի գիւտ է, որից առանձին ճարպիկութեամբ գիտեն օգտվել ազգային բիւրօկրատները, հայկական կեանքի այդ «ականաւոր» դէմքերը, ըստ ասութեան դաշնակցութեան փիլիսոփայ-թէօրետիկ Գանգրոյի։

Թողնենք, որ Պանգլոսները հրվեն ամենարեալի կազմակերպութեան ներքողներով և առանց ոսկեզօծելու և կեղծելու սուկ իրականութիւնը տարբալուծենք այն «ժողովրդական շրջափուլը», որ մեր խաւ-ծանապահները ուզում են ծախել իսկական դեմոկրատիզմի փոխարէն։

Այդ շրջափուլի մէջ ամենամեծ կտորը կազմում է կաթողիկոսական միահեծանութիւնը, որ միաժամանակ վեհարանի կամարիլայի քմահաճոյքն է։ «Կաթողիկոսական իրաւունք» մեր ազգասէրների բերանում այլ կերպ չէ հնչվում։ Այդ կողմից մեր ազգային-պատասխանատուները և ազգային-յեղափոխականները իրար նման են, ինչպէս մի խնձորի կեսած մասեր։ Ամեն մի փորձ լիբերալների և արմատականների կողմից սահմանափակելու այդ կղերական միջնադարեան աբսոլիտիզմը, յարուցել է անցեալում մեղուական-նորդարաբանների, իսկ ներկայումս բուն դաշնակցականների կողմից կատաղի հակառակութիւն։ Երկու ուղղութիւններն էլ հայկական կեանքի առանցքն են համարել կաթողիկոսի միահեծանությունը և միմեանցին թէ մաքիաւելիօրէն ձեւացրել են թէ հաւատում են, որ կաթողիկոսը կարող է իր մէջ ամփոփել մարդկային բոլոր առաքինութիւնները և լինել ամենագէտ։ Այդ կեղծիքը ազգային «քաղաքագէտները» իհարկէ պահել էին բարեպաշտ «ժողովրդի» համար, իսկ իրանց համար կաթողիկոսի աբսոլիտիզմը

ՄԱՍ

Ի. Ամանորյան

Ինչպես ասում է նրա ազգանունը, Ամանորյանը ծնվել է Նոր տարվա գիշերը։ Ինչպես ասում է նրա մանկությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հասակակիցները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ուսուցիչները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ծնողները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հարևանները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ընկերները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա սիրելիները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա թշնամիները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա բարեկամները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հայրը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա մայրը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա եղբայրները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա քույրերը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հարազատները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ազգականները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հայրենակիցները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ազգակիցները, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հայրենիքը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ազգը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա մարդիկը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա աշխարհը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա տիեզերքը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա անսահմանությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հավերժությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա անմահությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա աստվածությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա սրբությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա կատարելությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա գեղեցկությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա բարությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ճշմարտությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա արդարությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա խաղաղությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա սիրը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հավատը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հույսը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա գթությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ողորմությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա խնայողությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ազնվությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հոգևորությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա մարմնավորությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա հոգեբանությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա գիտությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա արվեստը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա գրականությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա երաժշտությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա նկարչությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա քանդակագործությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ճարտարապետությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա դերասանությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ռեժիսորությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա գրությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ասությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա լռությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա ուրախությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա տխրությունը, նա ամենուրեք ուրախություն է բերել։ Ինչպես ասում է նրա զայրույթ

Ամերիկայի Հայ Դեմոկրատական Կուսակցության Ամանորյա Ուրախալի Հանդեսը

Հանդեսի մասնակցելու համար հրավիրվում են բոլոր հայերը։

«Уссурійск. Жизнь» լրագիրը հաղորդում է հետևեալ ոռնսացիոն տեղեկութիւնը. «Ճապոնեան զինուում է նորից»։ Բոլոր նաւաշինարաններում, զինարաններում եռում է աշխատանքը։ Հարաւային Մանջուրիայում և Կորէայում երկաթուղիները կարգի են բերւում։ Շինվում են նոր խճուղիներ ու մարտկոցներ Կորէայի հիւսիսային մասերում։ Իսկ զօրքերը կենտրոնացվում են մի մասը Մանջուրիայում իսկ միւս մասը Կորէայում»։ Այնպէս որ դա սպասնական նշան է համարվում։

—

Պետերբուրգից հաղորդում են, որ մինիստրների խորհուրդը ներկայումս քննում է Կովկասի ռուս ազգաբնակութեան խնդիրը Պետական Դումայում իր յատուկ ներկայացուցիչը ունենալու համար։ Այդ առիթով, իբրև թէ, Կովկասեան փոխարքան իր կողմից յայտնել է, որ ռուս ազգաբնակութեան խնդիրը արժանի է ուշադրութեան ու յարգանքի։

—

Նորերս հեռագրական գործակալութիւնը հաղորդել էր, որ իտալական կառավարութիւնը միջոցներ է ձեռք առել Մ. Գօրկու ագիտացիան սահմանափակելու համար։ Այժմ այդ «ագիտացիայի» մասին լրագիրները հետեւեալ տեղեկութիւններն են հաղորդում։ «Նեապոլի բանուորական բօրսայում ի պատիւ Մաքսիմ Գորկու ժողով էր գումարված։ Ճառեր են արտասանել սոցիալիստ Լաբրիոլ և Ալտօբելլի։ Նրանք ողջունել են Գօրկու գալուստը։ Գօրկին համբուրել է Լաբրիոլին և խնդրել թարգմանել իր բարեմաղթութիւնները իտալական պրոլետարիատին։ Ժողովից դուրս գալիս ամբոխը ցոյցեր է արել Գօրկուն և ձեռքերի վրա տարել է նրան մինչև կոսքը։ Գօրկին արտասուախառն ճօճում էր գլխարկը և բացականչում. «Կեցցէ իտալական պրոլետարիատը»։

—

Օդեսայից «Рѣчь» լրագրին հոկտեմբերի 20 ին հեռագրում են. «Новое Обозрѣніе» լրագրում լոյս է տեսել խաղաղ-վերանորոգչական Բրայկեվիչի յօդուածը, որտեղ խիստ կերպով դատափետում է պրօգրեսիւ և բաղդիկալ կուսակցութիւնների ձգտումները։ Լրագրի աշխատակից Հինչուէյն, Նօվիցկի, և Մուրրա մամուլի միջոցով յայտարարել են, որ դուրս են գալիս յիշեալ լրագրի խմբագրութեան կազմից։ Այսօր գեներալ-նահանգապետի որոշման համաձայն նրանք աքսորվում են Օդեսայի քաղաքապետութեան սահմաններից։ Երկի տեղական հասարակական գործիչ կարտ Պանկեյեվի մօտ հաւաքված են եղել իր ծանօթներից ու բարեկամներից քսան հոգի առաջիկայ ընտրութիւնների մասին խորհրդակցելու համար. երեկոյեան ուշ ոստիկանութիւնը գալիս է այնտեղ, ցուցակագրում անունները և հրամայում անմիջապէս ցրվել։

—

«Р. Сл.» լրագրի Պարիզեան թղթակիցը հաղորդում է հետաքրքիր տեղեկութիւններ, որոնք ստացվել են Պարիզում Պետերբուրգի աշխատակիցներից։ Այդ տեղեկութիւնները վկայում են, որ բարձր շրջաններում հոկտեմբերի սկզբներին նորից սկսել էին կոմս Վիտտէի վրա առանձին ուշադրութիւն դարձնել և նրա հետ բանակցութիւն էին սկսել առանց Սոլիպինի գիտութեան։ Թէ որքան նպաստաւոր էին այդ բանակցութիւնները կոմս Վիտտէի համար, այդ երևում է հէնց նրանից, որ նրա համար յատուկ գնացք էին պատրաստել։ Բայց յետոյ ինչ որ բան պատահեց և նորից Սոլիպինի դրութիւնը լաւացաւ։ Կոմս Վիտտէն այդ ժամանակ միանիստրներից մէկից հեռագիր ստացաւ, որով հաղորդում էին, որ նրա վերադարձը այնքան էլ բարեհաճ կերպով չի ընդունվիլ։ Դրանից յետոյ կոմս Վիտտէն խնդիրք ուղարկեց իրան արձակելու Պետական Խորհրդի անդամութեան կոչումից։ Բայց դրա պատասխանը դեռ չէ ստացել։ Նրա այդ քայլը բացատրվում է նրանով, որ նա մոռացել է գնել իր թեկնածութիւնը Պետական Դումայի անդամութեան ապա և նրա նախագահի պաշտօնի համար, որից յետոյ իր ապագայ գործունէութեան մէջ ստեղծել առաջին պարլամենտական կաբինետը, որը, հաւանականօրէն կը լինի օպոզիցիոն։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Երեքշաբթի հոկտեմբերի 23-ին, ցերեկը, քաղաքիս երկու չարչի երեսներ՝ Էլոյ Խասխաչուրի և Փիլիպոս Սամէլաշուիլին, որոնք գիւղերում մանը առևտրով են պարապում, ձիով քաղաք վերադառնալիս, Ախալքալաքի ճանապարհի վրա, քաղաքից 23 վերստ հեռու, Բաումայալ գիւղից 2 վերստ այս կողմը, ենթարկվում են 4 հատ բերդանկներով զինված թուրք աւազակների յարձակման։ Ինչպէս պատմեցին իրանք երեսները, աւազակները կողոպտել են իրանցից 78 ռուբլի, իսկ միւս 300 ռ. թուղթ փողը էլսն ճարպիկութեամբ և աննկատելի կերպով գցում է անդրավարտիկի մէջ, որով կարողանում է ազատել այդ փողը։ Հրէաների ձին խրտնելով այս անակնկալ յարձակումից փախչում է դէպի քաղաք, որով ձին էլ ազատվում է։ Ինչպէս պատմեցին, աւազակները երեսներին մուր էին քսել, չը ճանաչվելու համար, սակայն հրէաները ճանաչել են նրանց։ Ասում են, որ գրանք Դմանցի և Կոկիեցի գիւղերի թուրքերից են եղել։ Զը նայելով որ շրջակայքում եղել են հեռուից ուրիշ տեսնող թուրքեր, սակայն, ոչ ոք օգնութեան չէ հասել։ Նոյն թուրք աւազակները կողոպտել են և 4 հատ հայ գիւղացիների, կարծես և այլ գիւղերի բնակիչներից։ Ինչպէս պատմեց կողոպտված Կարծախեցի Աւետիս Տէր-Գրիգորեանը, իրանցից աւազակները տարել են 80 ռուբլի 50 կոպէկ։ Խեղճ գիւղացիք այժմ մնացել են առանց կօպէկի և արտասվում են։ Նրանք վերոյիշեալ հրէաների հետ գնացին իշխանութեան դանդատվելու։ Ասում են, որ նոյն աւազակները կողոպտել են և ուրիշներին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՊՐՈՒՍԻԱՅՈՒՄ

—

Ինչպէս հաղորդել էինք, Պրուսիայում կրօնը լեհ երեխաներին գերմաներէն լեզուով սովորեցնելու պատճառով անդին անխորժութիւններ ստեղծեց և բանը այնտեղը հասաւ որ աշակերտները գործադուլ յայտարարեցին։ Գործադուլին մասնակցող լեհ երեխաների թիւը օրըստօրէ աճում է ու մեծ ծաւալ ստանում։ Դեռ մօտ ժամանակներս հեռագիրը գործադուլ անողների թիւը 20,000-ի էք հաստատում, բայց այժմ արդէն պարզվում է, որ միայն Պօզնանում դրանց թիւը 47,000 ի է հասնում, և մօտ 60,000-ի լեհական բոլոր նահանգներում։ Լեհական լրագիրները հաղորդում են, որ այդ թիւը շատ շուտով կը հասնի 100,000-ի։ Բոզոքող ծնողների տրամադրութիւնը սաստիկ գրգռված է. գերմանական լրագիրները տարածում են գերմանական ուսուցիչների անունով ուղարկված բազմաթիւ սպառնական նամակներ, որոնց սովորական իմաստը այն է թէ «մենք ձեր գլուխը կը ջարդենք, եթէ մեր երեխաներին ծեծելու լինէք»։

Կառավարութիւնը արդէն բեպրեսիաների է դիմել, որոնք աշակերտների դէմ գործադրվելուց յետոյ անցնում են այժմ էլ նրանց ծնողներին։

Մօտ օրերս այդ առիթով պրուսական մինիստրների խորհուրդը որոշել է խիստ հաւածանք սկսել այն ծնողների դէմ, որոնք զրդում են իրանց զաւակներին չը հնազանդվելու։

Գերմանական մամուլի յայտնի մասը շարունակում է կառավարութեան քաջալերանքը պարզում լեհերի դէմ. օրինակ Tägliche Rundschau լրագիրը խորհուրդ է տալիս օգուտ քաղել քաղաքացիական օրէնքներից 1,666 յօդուածներով, որի համաձայն երեխայի վրա խնամակալ է նշանակվում «եթէ որ հարը ուշք չէ դարձնում երեխայի դաստիարակութեան վրա կամ թէ հոր վարմունքը սպառնում է երեխայի բարոյականութեանը»։ Ի հարկէ, այդ խորհուրդը շատ էլ վատ չէ, բայց աւելի արմատական ու լաւ չէր լինի, եթէ երեխաներին բոլորովին խլէին և ծնողների վրա յատուկ դրա փոխարէն տուրք նշանակէին երեխաների ապրուստի, կրթութեան և խնամակալների վարձատրութեան համար։ Շատ բնորոշ է մի գերմանական ուսուցչի նամակը, որ տպագրված է «Germania» լրագրում. Նա տրտունջ է յայտնում իր դժուար կացութեան մասին։

«Ամենից աւելի վատ են պահում իրանց աշակերտուհիները։ Նրանք նստում են շրջազգեստները սեղմած, առանց մի բառ արտասանելու, և հոգիս լսելի ձայնով երգում են լեհական մեղեդիներ։ Ես նրանց նախազգուշացնում եմ, սպառնում, բայց հետևանքը այն է լինում, որ երգն ու ազմուկը անդադար սաստկանում է։ Անհարիր է յանցաւորներին դաներ։ Եթէ երգը դադարում է մի նստարանի վրա, նա իսկոյն սկսվում է մի ուրիշ տեղում»։

Այսպիսի միջոցներով ուսուցչին ծայրահեղութեան հասցնելով, երեխաները գնում են եկեղեցի, ծունկի են չոքում խաչի շուրջը և աղօթում մայրենի, մինչդեռ խաչը շրջապատող վանդակների դուրս, հաւաքվում ժողովրդի բազմութիւնը և ուսուցչի հացէին ուղղված թշնամական բացականչութիւնները միանում են երեխաների աղօթքին։

Քարաւիրտ երեխաները ուսուցիչներին համբերութիւնից հանում են։ Մէթէ գերմանացիմ ; կատարվում այդ ամենը և ոչ վայրենիների երկրում։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Պրուսիայի ժողովրդական լուսաւորութեան մինիստրը, ինչպէս յայտնի է, ժամանակաւորապէս արգելել է Բերլինի համալսարանում ընդունել ուսանողներին։ Այդ արգելքը մեծ դայրոյթ է պատճառել մամուլի պրոգրեսսիվ օրգաններին։ Ներկայումս թէև ռուսաստանցիներից խնդիրներ ընդունում են, բայց ոչ մի պատասխան չեն տալիս։ Արդէն անցեալ տարվանից սկսած քաղաքականապէս անբարեյուսալի անձինք համալսարան չէին ընդունվում, եթէ ռուսաց ոստիկանութեան վկայութիւնը աննպաստ էր լինում։ Մինչդեռ ժամանակ միջնակարգ կրթութեան մասին պահանջները առաջադրվում էին շատ խիստ կերպով. ընտանական և առևտրական դպրոցների վկայականները ամենևին չէին գոհացնում պրուսական համալսարանների իշխանութիւններին։ Ունկնդրուհիներ ընդունում էին նոյնպէս միայն այնպիսիներին, որոնք ունեցել էին բարձրագոյն կրթութիւն կամ թէ միջնակարգ կրթութիւնից բացի՝ 8-րդ դասարանի վկայական ևս լատիներէն լեզուի համար։ Այժմ էլ նոր դժուարութիւններ են ստեղծում, նիւթական դրութեան նկատմամբ, որի մասին պէտք է քննութիւններ կատարվին, և միայն այն ժամանակ, երբ ապացոյցներ կը ներկայացվին, որ նիւթականապէս ապահովված են, ուսանողները կընդունվին համալսարան։ Ցաւենայն դէպս ներկայումս շատերի համար անտանելի դրութիւն է ստեղծվել։

Դ Ա Ն Ի Ա

Պետական Դումայի նախկին անդամ Ա. Ալադինը երբ Պետերբուրգ էր վերադառնում ընտրողական պայքարին մասնակցելու համար, Կօպենհագենում խօսակցութիւն է ունենում «Daily Telegraph» լրագրի թղթակցի հետ։ Ալադինը այն կարծիքն է յայտնում, որ կառավարները երկրորդ Դումայում էլ ունենան նոյնքան ձայն, որքան և առաջինում (152), մինչդեռ աշխատաւոր խմբակը առաջվանից աւելի բազմաթիւ կը լինի քան առաջ էր (116)։ Ինկատի առնելով Դումայի գումարման մօտ լինելը, մասսայական անկարգութիւններ չեն կարող տեղի ունենալ։ Նրա կարծիքով պայքար կը մղվի քաղաքական հողի վրա, այլ ոչ փողոցներում։ Երբ Դուման հաւաքվի, կառավարութիւնը կը տեսնէ, որ ժողովուրդը ուզում է ազատութիւն և խաղաղութիւն, այլ ոչ ապստամբութիւն։

Մ Ա Ր Օ Ք Կ Օ

Վերջին ժամանակներս Մարոքկոյի զանազան ցեղերի մէջ հետզհետէ աւելի ու աւելի է տարածվում ապստամբութեան գաղափարը առհասարակ եւրօպացիների, իսկ մասնաւորապէս՝ ֆրանսիացիների դէմ։ Նորերս վերջացած Ռամազանի տօները բաւականաչափ նպաստեցին ագիտացիային։ Տեսակ տեսակ քարոզիչներ հրապարակային ժողովներում բազան պատերազմ էին յայտարարում, հակաքրիստոնեական արշաւանք Մարոքկոյի սուլթանի և եւրօպացիների դէմ։ Թշնամութիւնը արագութեամբ աճում էր։ Առանձին հռչակ են ստացել այդ կողմից ֆանատիկոս Վազարի և առաջնորդ Էրբեսուլին։

Այժմ եղիրաի սահմանի վրա նոր կայարան գրաւելը ֆրանսիացիների կողմից իւղ ածեց կրակի վրա, և եւրօպական պետութիւնների դիպլոմատիական ներկայացուցիչները սովորական նման այս անգամ էլ ուշ գլխի ընկան և լուրջ ուշադրութիւն դարձրին տեղական ցեղերի չարագուշակ տրամադրութեան վրա։ Զեռք առնվեցին մի շարք նախազգուշացման միջոցներ. կասկածելի բնիկները արտաքսվեցին եւրօպաների մայրաքաղաքից, ուրիշ խստութիւններ գործադրվեցին և աշխատում էին ճնշում գործ դնել սուլթանի վրա։ Գերմանական մինիստր բարոն Բեզենը երեք անգամ բաւականին գաղտնի առաջինդիա ունեցաւ սուլթանի մօտ։

Լարված տրամադրութիւնը լուծվեց նրանով, որ 21 արշաւանք գործվեց Ատլիա գիւղում գտնվող ֆրանսիական զօրապահակի վրա։ Բեն-Սէրժա կոչվող լեռնական ցեղերի մի զինված խումբ ներս խուժեց գիւղը և յարձակվեց զօրանոցի վրա գենուրներին վնասելի անելու նպատակով։ Ընդհարումից յետոյ, որի ժամանակ սպանվեցին զօրապահակի գլխաւորը և մի քանի զինուոր, լեռնականների այդ նպատակը աջողութիւն ունեցաւ։ Մեացեալ զօրքերը փախան, թողնելով իրանց զէնքերն ու զրահները յարձակվողների ձեռքում։

Ֆրանսիական լրագիրների մեծ մասը խորհուրդ է տալիս կառավարութեանը եռանդուն միջոցներ ձեռք առնել, երկիւղ կրելով, որ մի գուցէ հակաֆրանսիական շարժումը աւելի սաստկանայ։ Բայց ծայրահեղ ձախակողմեան լրագիրները զգուշութեան կոչ են անում, գրտնելով, որ այժմ ժամանակ չէ աւելորդ դժուարութիւններ ստեղծելու և նորից բարձրացնելու Մարոքկոյի հարցը, որ լուծվել է Ալժեզիրասի կօնֆերենցիայով։ Անկասկած է, որ ֆրանսիացիների ամեն մի բեպրեսսիան տեղական ցեղերի վերաբերմամբ հողային յափշտակութիւն անելու ձգտումով է բացատրվելու։

Պ Ր Ո Ի Ս Ս Ի Ա

Դպրոցական գործադուլը լեռնական գաւառներում։—Պօզնանի արքեպիսկոպոս Ստարլեվսկու ուղարկած շրջաբերականը և լեհական հոգևորականութեան ազիտացիան գերմանիզէն լեզուով կրօնը դասաւանդելու դէմ, դպրոցական կօնֆլիկտ ստեղծեց և գործադուլ առաջացրեց լեհական ազգաբնակութիւն ունեցող գաւառներում։ Ոչ միայն կօնֆեսիօնալ, այլև աշխարհիկ դպրոցներում աշակերտներն ու աշակերտուհիները հրաժարվում էին կրօնի դասը պատասխանել գերմաներէն, կրօնի դասաւանդութիւնը չեն յաճախում։ Պօզնանի շրջանի մի քանի դպրոցներում աշակերտները պահանջում են դասաւանդել լեհերէն լեզուով ոչ միայն կրօնը, այլև բոլոր առարկաները։ Դպրոցական գործադուլին մասնակցող աշակերտների թիւը միայն Բրօմբերգի շրջանում 21 ծուխի մէջ հաւասարվում է 20.000-ի։ Բենդկովսկու ուսումնարանի շինութեան մէջ կերօսինի ռումբ էին նետել, որից այրվել է ամբողջ շինութիւնը։ Կառավարութիւնը 500 մարկ վարձատրութիւն է նշանակել ռումբ ձգող յանցաւորին բռնելու համար։ Պրուսիայի ժողովրդական լուսաւորութեան մինիստր Շուլտսը նոյեմբերի 3 ին Պօզնան է գործադուլի դէմ միջոցներ ձեռք առնելու նպատակով, որը գնալով աւելի մեծ չափեր է ստանում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 հոկտեմբերի։ Պաշտօնական Ներքին գործերի մինիստրը հոկտեմբերի 24-ին նահանգապետին ուղարկել է № 3709 մի հրահանգ։ «Պատիւ ունեմ յայտնելու Ձեզ գերազանցութեան, որ ընտրողական ցուցակները յայտարարելու հետ միաժամանակ շրջանային դատարանների նախագահների հետ համաձայնութեամբ անյապաղ կազմել նահանգական և գաւառական մասնաժողովները Պետական Դումայի ընտրութիւնների գործերի համար, որպէսզի այդ մասնաժողովները իսկոյն և եթ կարողանան քննել այն խնդիրքները, որոնք կը տրվեն ընտրողական ցուցակների վերաբերեալ։ Միևնոյն ժամանակ պատիւ ունեմ աւելացնելու, որ վերոյիշեալ գործերի առիթով շրջանային դատարանների նախագահները արդարադատութեան մինիստրից արդէն ստացան համապատասխան ցուցմունքներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 հոկտեմբերի։ Պետերբուրգի համալսարանի պրօրեկտոր ընտրվեց պրոֆէսսոր Բրաուն։

ՆԻԺԵՐՕՐԿ, 26 հոկտեմբերի։ Պէնսիլվանում, Բռաալենդում, Կոնստէկիկուտում, Սցօվէում, Մինեսօտում, Ուայկոնէնտինում, Ինդիանում, Օգայհօում ընտրութիւնների ժամանակ յաղթութիւնը հասարակապետականները տարան, իսկ դէմօկրատները սովորականի համաձայն յաղթեցին հարաւում։ Կոնգրէսում մեծամասնութիւնը կաղմում է հասարակապետականները, չը նայած, որ նա պակասեց 112 ձայնից մինչև 70-նի։

ԼՕՆԴՕՆ, 26 հոկտեմբերի։ Համայնքների ժողովում Կէյր-Գարդին ներկայացրեց բիլ՝ կանանց ընտրողական իրաւունքներ տալու մասին։

ԲԷԼԳՕՐՕԴ, 26 հոկտեմբերի։ Սլօվէնիից Բօրիսօվկա գնացող պոստի վրա երեկոյեան չարագործները յարձակում գործեցին, և տարան 26000 ռուբլի։ Սպանված է սարժենիկը, վիրաւորված պօստատարը։

ԴԷՐԲԷՆԴ, 26 հոկտեմբերի։ Կողոպտված են Զէվեակովի ձկնորսական գործարանները։ Տարել են 2 հրացան, փող, և սպանված են 3 բանւոր։—Տեղական բանտում կալանաւորներից մէկը վիճելու ժամանակ, որը ծագեց 25 կօպէկի առիթով—սպանեց միւսին։

27 հոկտեմբերի

ԽԱՐԿՕՎ, 26 հոկտեմբերի։ Գիշերը ապրանքների կայարանում սպանված է ճանապարհի պահապանը. կողոպտված է դրամարկղը, որի մէջ կար 100 ռուբլի։

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 26 հոկտեմբերի։ Նաւօնական Մէխմայ կղզու մօտ սաստիկ փոթորկի ժամանակ ընկղմվեցան 128 ձկնորսական նաւակներ. խեղդվեցին մօտ 1000 եաւօնացի ձկնորսներ։—Մուսկղենում հաստատված է ամերիկական գլխաւոր հիւպատոսարան։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ, 26 հոկտեմբերի։ Ֆինանսական մինիստր Խագերուպ Բուլը և երկրագործութեան՝ Վինիէն, հրաժարական տուեցին։ Նրանց տեղերը նշանակված են Բէրգէ և Մարօսսաղ։

ԼՕՆԴՕՆ, 26 հոկտեմբերի։ Համայքների պալատում Պարկէրը յայտնեց, որ Մանչէստրում կալանաւորված ռուսաց հպատակ Զինգերը յայտնեց, որ ինքը քաղաքական գործիչ է։ Պարկէրը խնդրեց ստատս-քարտուղար Գլադստոնին, որ նա ձեռք առնի միջոցներ որպէս զի Զինգերին ցոյց տրվի ապաստանութիւն, որը տրվում է անգլիական օրէնքների համաձայն այդպիսի քաղաքական յանցաւորներին։ Գլադստօնը յայտնեց, որ վերոյիշեալ փաստի մասին իրան ոչինչ յայտնի չէ, ինքը տեղեկութիւններ կը հաւաքի։ Ռուսաց դեսպանատան յայտարարելուց յետոյ, թէ Զինգերը չէ այն անձնաւորութիւնը, որին իշխանութիւնը փնտռում է, սպանութիւնների մէջ մեղադրվելով, Զինգերը ազատվեց։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 հոկտեմբերի։ Զինուորական-շրջանային դատարանը գնդապետ Եանուշկէվիչի որդուն, որը Պետերբուրգի հեռաւոր զօրքի ուսումնարանի իւնկեր է, 1905 թւին դեկտեմբեր ամսում Պետերբուրգից Միտաւա գնալու ժամանակ ճանապարհորդներին թռուցիկներ բաժանելու համար, դատապարտվեց աքսորի։

ՄԻՏԱՎԱ, 26 հոկտեմբերի։ Երէկ գնդակահարվեցին Բէկկէրի գործարանի բանւոր տէր-բօրիսանները, որոնց նպատակն էր տէրբօրի միջոցով գործարանի բանւորներին մնացնել յեղափոխական նպատակների համար։

ՎԱՐՇԱՎԱ, 26 հոկտեմբերի։ Երէկ Սկվերնէվի փողոցում մի քանի անյայտ չարագործներ տեղն ու տեղը սպանեցին բանւոր Սմոլկովսկուն։

ԼՕԶ, 21 հոկտեմբերի։ Այսօր Վօդնօ շուկայում բանւորները նորից ընդհարվեցին իրար հետ։ Երկու բանւոր ծանր վիրաւորված են։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 26 հոկտեմբերի։ Դատարանը արդարացրեց մայրուսական «Ֆորպաս» ամսագրի խմբագիր Բրկովին, չը գտնելով գրված համարների մէջ ոչ մի յանցաւոր գրուածք։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 հոկտեմբերի։ Դեկտեմբերի 1-ից Եւրօպական Ռուսաստանի գլխաւոր քաղաքներից մինչև Խարբին, Վլադիվաստօկ, Խաբարովկա, Շանխայ Նաւահանգիստը, Նագասակի, Ցուրիգա գնացող ճանապարհորդների տոմսակների վրա նշանակվում է նոր տարիֆ (ուղղակի)։ Նոր տարիֆի գործածութիւնը կը վերաբերվի բոլոր երեք կարգի ճանապարհորդների համար։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 26 հոկտեմբերի։ Ռուս մարդկանց միութեան բաժանմունքը սկսեց իր գործունէութիւնը։

ՄՕՍԿՎԱ, 26 հոկտեմբերի։ Հոկտեմբերի 26-ին համալսարանում պարապմունքները վերսկսվեցին։ Դասախօսութիւնները կարդացվում էին լցված լսարաններում և վերջացան առանց որևէ ինցիդենտի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 հոկտեմբերի։ Սահմանի պահպանութեան գլխաւոր շտաբը հոկտեմբերի 25-ին Խարբինից ստացաւ հետևեալ հեռագիրը։ Հոկտեմբերի 16-ին Զատմուրսկի շրջանի սահմանապահ շրջիկ պահակը, որը բաղկացած էր 4 զինուորներից Նազարէնկօի հրամանատարութեան ներքոյ, ենթարկվեց խունխուզների միահամուռ կրակին. զինուորներից մէկը վիրաւորվեց։ Խունխուզներին հետապնդման համար սահմանապահ ձիաւոր զինուորներից 125 հոգի Կօրաբլէվայի հրամանատարութեամբ, ուղարկվեց նրանց յետևից։ Մաօխօծի կայարանից 28 վերստ հեռաւորութեան վրա խումբը հասաւ խունխուզներին, փոխադարձ հրացանաձգութեան ժամանակ խմբի կողմից սպանվեց մի զինուոր, իսկ վիրաւորվեցին հինգը—որոնցից երկուսը ծանր. նոյնպէս վիրաւորված են երկու ձի. խունխուզների կորուստը 20-իցանց է։ Խունխուզների թիւը 200-ի էր հասնում։—Մենատի տուած բացատրութիւնների հիման վրա Պետերբուրգում ընտրողական ընդհանուր ցուցակի թիւը 8000 պակասեց, որոնց մեծամասնութիւնը բընակարան բռնող բանւորներ են։ Հոկտեմբերի 26-ին Պետերբուրգում վերջացաւ նորակոչիկների զինուորագրութիւնը։ Զինուորագրութիւնը անցաւ խաղաղ կերպով։

ՊԱՐԻԶ, 26 հոկտեմբերի։ Պալատը քննեց աշխատանքի նոր մինիստրութեան պահանջը, որը պահանջում է կրեդիտներ յատկացնել իրան։ Մի քանիսը կդիմանօրէն տեղադրում են նրա մէջ, որ նա, կազմելով նոր մինիստրութիւնը, գործեց որպէս անիշխանական։ Վիվիանին աշխատանքմինիստրի արութեան նպատակների մասին արտասանեց մի փայլուն ճառ և յայտնեց, որ նա կը լայնացնէ պրոֆէսիօնալական ընկերութիւնների գործունէութիւնը. բանւորները լաւ գիտեն, որ իրանց դատութիւնը ձեռք կը բերեն ոչ թէ բռնի միջոցներով, այլ խաղաղ կերպով անդուլ աշխատանքով։ Յետոյ նա ժամանցոյց արեց, որ նա պատասխան կը պաշտպանի 10-ժամեայ բանւորական օրը։ Զատկողմեանների կողմից շարունակ խրախուսիչ աղաղակների մէջ, Վիվիանին խիստ կերպով յարձակվեց պապի վրա, յայտնելով որ Վադիկանի հետ կռիւը դեռ չէ վերջացած։ Ամենն կողմից Վիվիանին ողջունում և շնորհաւորում են։ Մեծամասնութեամբ 366-ի հակառակ 129-ի որոշվեց հրատարակել այդ ճառը Ֆրանսիայի հասատատութիւնների մէջ։ Աշխատանքի մինիստրութեան կրեդիտների առաջարկը քուէարկութեան ենթարկվեց և ընդունվեց մեծամասնութեամբ 512-ի ընդդէմ 20-ի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ԶԻՆՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԽԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Օ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԻՆԱ—1—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Ե. Գուլդնօվ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկախտ։
Խ. Գ. ԱԲԵՆՑԵ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.։
Վճարը 50 կ.։ Հաւատարիները ձրի։ Համախորհրդի (գօն սուլտուսի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Կայքերը կրակից փոխադարձ ապահովագրող Թիֆլիսի ընկերութեան

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ.պ. անդամների, որ կիրակի, հոկտեմբերի 29-ին, ցերեկվայ ժամը 11-ին

Քաղաքային խորհրդի դահլիճում կայանալու է

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

փոխանակ ներկայ տարվայ հոկտեմբերի 15-ին չը կայացած ժողովի, քննելու համար ընկերութեան վարչութեան Սիզրանի փոխադարձ ապահովագրող ընկերութեան փոխատուութիւն բաց թողնելու մասին արվելիք զեկուցումը։ Ընդ սմին վարչութիւնը պատիւ ունի յայտնել պ.պ. անդամներին, որ ընկերութեան կանոնագրութեան § 26-ի համաձայն նշանակված ժողովը կը հաշվի ամենայն դէպս, կանոնաւոր կայացած, չը նայելով ներկայ եղող անդամների թիւին։ 1—1

ՀԱՅԱԿԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ
Կիրակի, հոկտեմբերի 29-ին
Հալաբարի հայ թատերասէրների խումբը
կը ներկայացնէ
I
ԱՍԼԱՆ-ԲԱԼԱՍԻ
Պատ. անցք 4 գործ. փոխ. Սարդարեանի
II
ԲԱՆԱՍՏԵՂԾ
Վոդ. 1 գործ. հեղ. Տէր-Գրիգորեանի
Սկիզբն է երեկոյեան ժամը հիշտ 8-ին
Տեղերի գինն է 1 ռ. 20-ից մինչև 20 կօպ.
Տոմսակները վաճառվում են թատրոնի կասայում առ. ժամը 10-ից մինչև 2-ը, երեկ. 5-ից մինչև 8-ը։
Ծաղամիջոցներին կը նուագէ երաժշտական խումբը։
Կարգադրիչ՝ Ս. Պետրոսեան
1—1

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ“
ռաբաթաթերթի չորրորդ հատորը
Հեռեակ բովանդակութեամբ
Ո՞ւմ համար են ստեղծուել դաշնագրերը II — Տ. Զաւեճ
Երիտասարդ-Թիւրքերի կեանքից — Թիւրք կեանքի և գիտակցութեան շուրջը — Տ. Զ.
Հալածական — Աւետիսիկ
Վոսփորի ափերէն, Մինիստրները (Զէլմալէդդին էֆէնդի, շէյխ-իւլ-իսլամը) — Ուրկամ
Զորս օր Կ. Պոլսում — Անցորդ
Մամուլի շուրջը
Կարծիքներ (Թիւրքահայ հարցի մասին) IV — Ա. Ի.
V — Բանւոր Օհանես
Նամակ Էրզրումից — Աւրակուցի
Արտաքին լուրեր
Բ Ա Ժ Ի Ն Կ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36
(Կ.Հ.ռ.) 14—100

Մի ինստիտիկեն հայ ընտանիքում
ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ
գիշերօթիկ աշակերտներ և աշակերտուհիներ լիակատարար պայմաններով,
ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ
և մի գիմազիաբարտ օրիորդ
դասեր է տալիս։
Հասցէն՝ Մուխրանովսկայա փողոց № 20
2—3

Բ Ա Ժ Ի Ն Կ
Ա. Մ խ ի թ ա ր ե ա ն ց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Օլօլակ, անկիւն Բէհրութեան և Պասկեվիչի փողոցների,, № 33/15։
(ա. օ.) 41—100

Բ Ա Ժ Ի Ն Կ Ա Պ Ե Տ
Մ. Պ. Զ ա խ ա ր բ է գ ե ա ն ց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶՂԱՑԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ. / երեկոյեան 6—7 ժ.
ՏԷ